

Ծ Ի Ա Ծ Ա Ն

Մ Ա Ն Ր Ա Լ Ո Ւ Ր Ք .

ԼՈՆՏԸՆԻ ԱՇԽԱՐՀԱՀԱՆԴԻՍԻՆ ՆԻԹԵՐԸ .

Լոնտրնի այս տարուան աշխարհահանդիսին մէջ 25 հազար ութ հարիւր ճարտարաբուհատ նիւթ կայ . սոցա մէջէն 5 հազարը Մեծին Բրիտանիոյ մէջէն են, 1,800-ը Անգլիոյ գաղթականներէն, մնացորդ 17 հազարը օտար աղգերէն են հետեւեալ կերպով .

Գաղղիա՝ որ 1851-ին աշխարհահանդիսին զրկած էր միայն 1,800 կտոր բան, այս անգամ՝ յուզարկեր է 4,000. — Աւստրիա, 1,400. Գերմանիա, 5,000, առանց համբելու ազատ քաղաքաց զրկածները որ 5—600 կտոր բան են. — Ռուսաստան, 700. — Իտալիա, 2,000. — Հռոմ, 50. — Սպանիա, 1,100. — Փորթուկալ, 5,400. — Զուիցերի, 500. — Հոլանտա, 400. — Տանիմարք, 500. — Շուէտ, 600. — Նորվեկիա, 200. — Տաճկաստան, եգիպտոս եւ Թունիզի պէյուլթիւնը մէկտեղ, 150. — Յունաստան, 250. — Ամերիկա 7—800 կտոր բան: Կան նաեւ Զինու եւ ձափոնի ճարտարութիւններ:

Այս քանակիւնք հազար ութհարիւր նիւթերուն մէջէն քանի հաւ կայ որ Հայու մը ձեռքէն ելած են . . . քանի հաւ կայ որ Հայ աւուան պատիւ պիտի բերեն . . . — Տխուր մտածութիւն . . .

ՊԱՐԹԵՆՈՆԻ ՀԻՆ ՏԱՃԱՐԸ .

Փրուսիոյ թագաւորը հնագէտներ զրկեց Յունաստան՝ որ աւերակները զննեն ու Յունաց պատմութեան մութ մնացած շատ կէտերը լուսաւորեն իրենց քննութեամբքը:

Սոքա Ակրոպոլիսն սկսան պեղել, եւ գտան շատ մը հնութիւններ: Յիշատակի արժանի է Պարթենոնի տաճարին մուտքը որ բոլորովին ծածկուած եւ աներեւոյթ եղած էր: Հիմա փորեցին մաքրեցին ու դուրս հանեցին:

Ապրիլի 11-ին օրը նշանաւոր եղաւ. վասն զի խուռն բազմութիւն Յունաց եւ օտարաց՝ հազար հինգհարիւր տարիէն ետեւ՝ այն առաջին անգամ Պարթենոնի փառաւոր սեմը կկոխէին: Ո՛վ գիտէ ինչ մտածութիւններ իրենց հայրենասէր սիրտը կյուզէր:

Ա Ռ Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ս Ա Մ Ս Ա Գ Ր Ո Յ Ս .

Թէպէտ եւ խմբագրիչք եւ տպագրիչք ամսագրոյս ամենայն ջանք կընեն որ ոչ միայն սորա հայերէն մասերը անվրէպ կարգաւ հրատարակուին ամիսն երկու անգամ, այլ եւ ռուսերէնը ամէն ամիս, բայց երբեմն ռուսերենին տպագրութիւնը ետ կմնայ այնպիսի պատճառներով՝ որ հրատարակողաց ձեռքը չեն: Ուստի հայերէն եւ ռուսերէն մասերուն միանգամայն գրուած բաժանորդներէն կկնդրուի որ չղարմանան՝ եթէ երբեմն ռուսերէն մասը զատ ընդունին, եւ ոչ հայերենին հետ իմիասին:

ԻԽԱԼԻՊԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԷ՝ ԱԶԳԻՍ ՀԱՅՈՑ .

Խալիպեան Ուսումնարանին Վերատեսչութիւնը կձանուցանէ ամենուն, որ ուսումնարանին ձրիավարժ աշակերտաց թիւը վաղուց լցուած լինելով, նոր ձրիավարժ աշակերտ չընդունուիր. ուստի կկնդրուի իբարեսէր ծնողաց որ զուր տեղը աղաչանաց նամակներ գրելու չաշխատին ուսումնարանին Վերատեսչին՝ այս բանիս համար, եւս առաւել զգուշանան իրենց որդիքը անձամբ իթէոգոսիա բերելէն կամ յուզարկելէն. գիտնալով որ զանոնք ընդունիլը կարելի չէ:

Հրամայեցաք տպագրել. Իթէոգոսիա, Ի15 Մայիսի 1862. Դարրիէյ Վ. Այվազեան.

ԻՏԱՐԱՆԻ ԽԱԼԻՊԵԱՆ ՈՒՍՈՒՄԱՐԱՆԻ ԱՂԳԻՍ ՀԱՅՈՑ: